2025

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Զ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

Ա/Զ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ տնօրեն՝ Լ. Գ. Ազիզյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն 5

1.2 Հապավումներ 5

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը 6

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը 6

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) 9

1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր* 9

1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր* 10

1.5.3 *Տեղնոլոգիական մասի նկարագիր* 14

1.5.4 *Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ* 16

1.5.5 *Իրավիճակային հատակագիծ* 18

1.5.6 *Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ* 21

1.5.7 *Ժամանակացույց* 24

1.5.8 *Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ* 25

1.5.9 *Ջեռուցում և օդափոխություն* 26

1.5.10 *Արևային համակարգ* 28

1.5.11 *Ջերմամեխանիկական մաս* 29

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ 31

2.1 Շինարարության պայմանները 32

2.2 Աշխատանքների կատարման սխեմա 32

2.3 Շինարարության ժամկետները 33

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը 33

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները 34

2.5.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* 35

2.5.2 *Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը* 36

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ 38

3.1 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ 41

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 42

4.1 Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները 42

4.2 Կլիմայական պայմանները 42

4.3 Օդային ավազան 44

4.4 Ջրային ռեսուրսներ 44

4.5 Հողածածկ 45

4.6 Կենսաբազմազություն 46

4.7 Հատուկ պահպանվող տարածքներ 46

4.8 Պատմության և մշակութային հուշարձաններ: 47
4.9 Բնության հուշարձաններ 47
4.10 Սոցիալ-տնտեսական բնութագիրը 47
4.11 Թափոնների կառավարում 48
4.12 Աղմուկ և թրթռում: 49
ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: 49
Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ: ..49
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 50
5.1 Ռիսկերի գնահատում 50
5.2 Արտանետումների աղբյուրները 50
5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 50
5.3.1 *Մթնոլորտային օդ* 50
5.3.2 *Ջրային ռեսուրսներ* 51
5.3.3 *Հողային ռեսուրսներ* 51
5.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը* 52
5.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ* 52
5.3.6 *Աղմուկ և թրթռում* 53
5.3.7 *Թափոնների կառավարում* 54
5.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում* 54
5.3.9 *Էներգախնայողության միջոցառումներ* 55
6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 55
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 56
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 58
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 60
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 61

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	**«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ**
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	**Ք. Երևան, Չարենցի փ. 1**
Նախատեսվող գործունեության հասցեն՝	**ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր**
Հեռախոս՝	**+37499994222**

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից միջնակարգ դպրոց: Միջնակարգ դպրոցի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր :

Միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Միջնակարգ դպրոցիի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Տաշիր բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության

մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցիի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության

վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին

տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի Ա 781-Ն որոշում

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.),

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000թ.)

«ՀՀ ջրային օրենսգիրքը» ենթունված 2002 թվականի հունիսի 4-ին, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*

Միջնակարգ դպրոցի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում:

Կառուցապատման ենթական հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.6592 հա:

Հողատարածքը ծանրաբեռնված է հին դպրոցի /3492,7քմ/ և կաթսայատան /124,4քմ/ շենքով, որոնք նախատեսվում է ապամոնտաժել: Քանդման արդյունքում առաջացող

շինաղբի ծավալը կկազմի 2200 մ³, այն կտեղափոխվի համայնքի հետ նախապես համաձայնեցված աղբավայր: Նոր միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները կսկսվեն քանդման աշխատանքները ավարտելուց հետո:

Կառուցապատման ենթակա տարածքի հարևանությամբ են գտնվում մեկ կամ երկու հարկանի բնակելի տներ, հեռվարությունները դպրոցի մասնաշենքից տատանվում են 18-ից 64մմ:

Հողամասի բնութագրերը՝

Կադաստրային ծածկագիրը՝ 06-008-0238-0002

Մակերեսի չափը (հա)՝ 1.6592

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է հատել 15 հատ ծառ:

Հողի բերի շերտի հզորությունը ըստ երկարաբանահետախուզական ուսումնասիրության կազմում է 0.7-1.5մ: Հանվող բուսահողի ծավալը կկազմի 9000մ³: Հանվող բուսսահողը կպահպանվի տարածքում ծածկված վիճակում և հետագայում կօգտագործվի տարածքի կանաչապատման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատումներ տեղի չի ունենալու: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտության դեպքում գոյություն ունեցող ծառերը կծածկվեն թաղանթով:

1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր*

<u>Միջնակարգ դպրոցի</u>

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում նախատեսվող Միջնակարգ դպրոցիի կառուցման աշխատանքային նախագիծը մշակված է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 18042025-06-0067 վկայականի և N ՆԹ-2642-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Փաթեթում ներկայացված է ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրի միջնակարգ դպրոցի էսքիզային նախագիծը:

Համաձայն նախագծի դպրոցը նախատեղվում է կառուցել 432 աշակերտի համար: Դպրոցը երկհարկանի է առկա է նաև նկուղային հարկ, որը ծառայում է նաև որպես ժամանակավոր թաքստոց-ապաստարան: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են 1-ին ից մինչև 5-րդ դասարանների

2-ական լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն: Երկրորդ հարկում առկա են նաև պատշգամբներ:

Հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճը իրեն սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցն ունի 36.6 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից, համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3,5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7 մ x 7 մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48 մ2: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հակի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4.5 մ:

Ջրահեռացումները նախատեսվում է իրականացնել կազմակերպված: Տանիքների թեքությունը կազմում է 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով, գույնը մուգ մոխրագույն: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Կառույցի արտաքին պատերը իրենցից ներկայացնում են 20 սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10 սմ ջերմամեկուսիչ շերտ և 30 մմ հաստությամ տրավերտինե երեսպատում՝ Ց/Ա շաղախով ամրանային ցանցի վրա:

Շինության ներքին սենքերը համաձայն նախագծի հարդարվում են գաջե սվաղով և ներկվում լատեքսային ներկով RAL 9010 երանգի:

Նկուղային հարկի, սանհանգույցների, խոհանոցային սենքերի և տեխնիկական այլ սենքերի պատերը ենթակա են Ց/Ա սվաղման՝ հետագա ներկումով կամ սալիկապատմամբ: Պատշգամբների ստորին հատվածում իրականացվող կախովի առաստաղները

ֆիբրոբետոնից են, իսկ ներքին սենքերում և առաստաղներում կիրառված գիպսեստվաթաթուղթը ջրակայուն է, 12.5 մմ հաստության:

Հատակների հարդարման մեջ կիրառված են կերամոգրանիտ, վինիլ և սպորտային վինիլ: Բոլոր ճաղերը մետաղական են, ենթակա են երկտակ ներկման մետաղական հակակոռոզիոն ներկով RAL 7016 երանգի: Ա' առանցքով պատի շրջանաձև բացվածքների հաստությունը իրականացվում է Ց/Ա սվաղով և տրավերտինի երանգի ֆասադային ներկով: Կենտրոնական մուտքի աջ կողմում նախատեսված է ցայտաղբյուր: Արտաքին պատուհանների և դռների պրոֆիլները նախատեսված են ալյումինե, ջերմային կամրջակով, ապակեփաթեթի ներքին շերտը էներգախնայող: Ներքին վիտրաժները ալյումինե շրջանակներով, առանց ջերմային կամրջակի: Երդիկների ապակիները 1 շերտը թրծված ապակուց են, ներքին շերտը տրիպլեքս, համալրված օդափոխության համակարգով՝ ջերմոցային էֆֆեկտը կանխելու նպատակով:

Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ սանհանգույցներ, թեքահարթակներ, ուղղահայաց ամբարձիչ, ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՄՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Տարածքը պարսպապատվում է, նախատեսելով երկու մուտք, մեկը հիմնական ճակատի կողմից, մյուսը նրանից վեր դեպի հյուսիս արևմուտք:

Տարածքում նախատեսվում է նաև բաց պարսպապատ մարզադաշտ, նոր կաթսայատուն, վազքուղի, երկու մաքրման կայաններ իրենց ջրհավաք կայանով, նաև մեկ հակահրդեհային ջրավազան: Դպրոցից 10 մ հեռավորության վրա դեպի հյուսիս նախատեսված է ապաստարանի ելքը: Դպրոցի մասնաշենքը տեղադրված է լսարանների ՀՍ-ՀՎ կողմնորոշմամբ: Դպրոցին կից եզրամայթը և կենտրոնական մուտքի մոտեցումը նախատեսվում է իրականացնել դեկորատիվ բետոնե սալիկներով, իսկ մնացած ճանապարհները, որոնք հանդիսանում են հրշեջ և այլ հատուկ մեքենաների մոտեցում՝ ասֆալտապատ: Մնացած տարածքը կանաչապատվում է և ունի ոռոգման համակարգ: Տարածքում նախատեսված է նաև լուսավորության համակարգ: Անձրևաջրերի հեռացումը նախատեսվում է թեքությունների հաշվին ուղղել դեպի կանաչապատ տարածքներ՝ հեղեղատար համակարգի բացակայության պատճառով:

Համաշինարարական աշխատանքները կատարել ՀՀՇՆ 3.03.01-87-ով

Նախագիծը մշակված է համաձայն

ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին

բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ..... 16592.0 մ²
. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ ..... 3666.0 մ² (22.1%)
. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ ..... 7149.7 մ² (43.1%)
. ԲԱՑ ՄԱՐԶԱԴԱՇՏ,ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՐՊԱՍՆԵՐՈՎ,ՌԵՏԻՆԵ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ 1160.0 մ² (7%)
. ԲԱՑ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՇՈՒՐՋ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ՑԱՆԿԱՊԱՏԻՑ ՆԵՐՍ 464.0 մ² (2.8%)
. ԲԱՑ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՇՈՒՐՋ ԲԵՏՈՆԵ ԵԶՐԱՔԱՐ 80*200 144.0 գծ.մ
. ԲԱՑ ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿ ՌԵՏԻՆԵ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ 478.0 մ² (2.8%)
. ԲԱՑ ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՇՈՒՐՋ ԲԵՏՈՆԵ ԵԶՐԱՔԱՐ 80*200 գծ.մ 90
. ԱՆԶՐԱՆՑԻԿ ..... 3194.9 մ² (19.3%)
. ԶՐԱՆՑԻԿ ..... 479.4 մ² (2.9%)

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Գազամատակարարման, էլեկտրոմատակարարման և ջրամատակարարման համար կառուցապատողը դիմել լիազորվածմարմիններին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Կաթսայատուն

Համաձայն նախագծի կաթսայատունը նախագծվել է 432 հոգանոց դպրոցի սպասարկման համար:

Շինությունը 1 հարկանի է, հատակագծում ունի 6մx9մ առանցքային չափեր: արտաքին պատերը Նախատեսվում են իրականացվել 2 շարք 200 մմ-անոց բետոնե բլոկներով՝ համապատասխան Ամրանավորմամբ: պատերը նախատեսվում է ջերմամեկուսացնել 40 մմ XPS տեսակի ջերմամեկուսիչով:

Տանիքը միալանջ է, դեպի ետին մաս թեքությամբ: տանիքի վերին շերտերը նախատեսվում է իրականացնել 2 շերտ փափուկ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ ծածկույթով: Ջրահեռացումը ազատ է:

Գետնախարսխի երեսպատումը նախատեսվում է իրականացնել 30 մմ-անոց բազալտե սալերով, իսկ վերին մասերը 30մմ-անոց տրավերտինե սալերով: Երեսպատումը իրականացվում է մետաղական ամրանային ցանցի կիրառմամբ: կաթսայատան դռներն ու պատուհանները նախատեսվում են ալյումինե պրոֆիլներով:

1.5.3 *Տեղնոլոգիական մասի նկարագիր*

Միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի տեխնոլոգիական մասը կատարված է ճարտարապետա- շինարարական առաջադրանքի հիման վրա:

Նախագիծը բաղկացած է մեկ մասնաշենքից: Տարածքների կազմը և մակերեսները, շենքի հատակագծային կառուցվածքը ապահովվում են ուսումնական ծրագրերի իրականացմանը և համապատասխանում է միջնակարգ դպրոցի 1ից -12րդ դասարանների դասընթացների կազմակերպմանը:

Դպրոցը ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց ուսման պահանջներին: Դասարանների ընդանուր թիվը և լրացումը (մեկ դասարանում սովորողների թիվը) որոշում է դպրոցի տարողունակությունը: Աշակերտների քանակը 1ից -12րդ դասարաններում նախատեսված է 18 աշակերտներ: Ինֆորմատիկայի, օտար լեզուների և աշխատանքի ուսուցման դասընթացների անցկացման համար դասարանները կիսվում են 2 խմբերի:

1ից — 4-րդ դասարանների դասավանդումը նախատեսվում է ուսումնական սենյակներում, որոնք նախագծված են առաջին հարկում:

5ից — 12-րդ դասարանների դասավանդումը նախատեսվում է դասարաններում և առանձին առարկաների գծով լաբորատորիաներում և ուսումնական կաբինետներում:

Ելնելով տարածքների խմբավորումից, դպրոցի շենքը նախագծված է հետևյալ կերպ: Շենքի առաջին հարկում գտնվում են գլխավոր նախամուտքը, պարետի սենյակով, վարչական և ոսումնական սենյակներ: Նույն հարկում նախատեսված է հաշվիչ տեխնիկայի և ռազմագիտության, տնարարության և գործվածքների մշակման, մետաղամշակման և փայտամշակման ուսումնաարտադրական կաբինետներ, որտեղ տարվում են տեսական և գործնական դասընթացներ: Արվեստանոցը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով:

Դպրոցը ապահովված է բժշկի կաբինետով, ավանդական և համակարգչային գրադարանով, գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրվաց են համակարգիչներ և պատճենահանման սարքավորում:

Առաջին հարկում նախատեսված է մարզասրահ հանդերձարաններով և սանհանգույցով, մարզիչի առանձնասենյակ և պահեստ: Դահլիճը օգտագործվում է ֆիզիկական վարժությունների և սպորտային խաղերի համար: Շենքի երկրորդ հարկում նախատեսված են ուսումնական սենյակներ, ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի կաբինետներ իր լաբորատորիաներով, որոնք կահավորված են ցուցադրական և աշակերտական լաբորատոր սեղաններով, որտեղ տեղադրված են էլեկտրական վարդակներ: Քիմիայի լաբորատորիայում տեղավորված է օդաքաշ պահարան, իսկ աշակերտական սեղանները կոմպլեկտավորված են ջրի ծորակներով: Նախատեսված է օտար լեզվի ուսումնական սենյակներ: Երկրորդ հարկում գտնվում է հանդիսությունների դահլիճը 307 տեղով իր հանդերձարաններով, երգի, երաժշտական և պարարվեստի խմբակով:

Դպրոցի առաջին հարկում նախատեսված է ճաշարան, որը սպասարկում է 432 աշակերտների: Ճաշարանը նախատեսված է երեխաներին տաք սնունդ ապահովելու համար: Ճաշարանի դահլիճի նստատեղերի թիվը կազմում է 167 տեղ: Կրտսեր դասարանների սնունդը կազմակերպվում է մեկ հերթափոխով և կազմում է 164 աշակերտներ, իսկ ավագ դասարանների համար՝ 5 ից –12րդ դասարանների համար՝ երկու հերթափոխով: Աշակերտների համար տաք սնունդը կազմակերպվում է ըստ դասարանների՝ 20 րոպե տևողությամբ ընդմիջումներում: Աշակերտների սնունդի մատակարարումը կազմակերպվում է հետևյալ միջոցով

1. շարժական սայլակներով

2. ինքնասպասարկման գծի միջոցով

Դպրոցի ճաշարանը բաժանված է արտադրամասերի, պահեստի: Առկա է ճաշասրահ լվացարաններով և պատրաստի ուտեստների համար բաշխման գիծ:

Նախատեսված է բեռնաթափման սենյակ, որի միջոցով մթերքը պահեստավորվում է: Այստեղից բաշխվում է արտադրամասերի միջև: Ճաշարանի տաք արտադրամասը դա հիմնական արտադրամասն է, որտեղ իրականացվում է ջերմային վերամշակում: Նախագծված արտադրամասի սարքավորումների արտադրողականությունը լուծված է, հաշվի առնելով ճաշարանի պահանջները: Տաք արտադրամասը միացված է խոհանոցային լվացման կետի հետ : Տաք արտադրամասից պատրաստի ուտեստները տեղափոխվում են դեպի ինքնասպասարքման գիծ: Սառը արտադրամասը նախատեսված է սառը ուտեստների համար: Տեխնոլոգիական գործողությունները մեքենայացնելու համար ընտրվել է անհրաժեշտ կտրատելու սարքավորումներ: Սառը արտադրամասը գտնվում է տաք արտադրամասի տարածքում: Նույն տարածքում նախատեսված է հաց կտրատելու մեքենա: Բանջարեղենի արտադրամասը նախատեսված է կարտոֆիլի, բանջարեղենի վերամշակման, մրգերի լվացման համար: Սպասքի լվացման սենքում նախատեսված է սպասքի լվացումը, պահեստավորումը և տեղափոխումը դեպի բաշխման գիծ: Սպասքի լվացումը նախատեսված է երկու գծով՝ – օգտագործելով լվացող մեքենա – օգտաքործելով լվացարանագոգեր Խոհանոցային կաթսաների և այլ պարագաների լվացման համար նախատեսված են լվացարաններ:

Անձնակազմի համար նախատեսված է հանդերձարան սանհանգույցով, որտեղ տեղադրված է զգեստապահարան վերնահագուստի և տնային հագուստի համար: Արտադրամասերի և սարքավորումների տեղադրումը կատարված է հաշվի առնելով աշխատանքային մակերեսների առավելագույն օգտագործումը և սարքավորումների ռացիոնալ տեղադրումը: Դա հնարավորություն է տալիս ապահովել շարժման մինիմալ ծախսերը և գործողությունների հաջորդականությունը:

Նախագծում ընտրված են ժամանակակից և հարմարավետ սարքավորումներ:

1.5.4 *Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ*



Հողամասի կոորդինատներ			
շրջադարձային կետեր	կոորդինատներ Y	կոորդինատներ X	գծային չափեր
1	8439927.7259	4553494.7401	
2	8439929.541	4553492.527	2.862
3	8439932.4385	4553489.3425	4.305
4	8439935.2107	4553486.2095	4.183
5	8439937.9776	4553482.9686	4.261
6	8439940.8647	4553480.4257	3.847
7	8439944.3437	4553477.3673	4.632
8	8439947.7007	4553474.2873	4.555
9	8439951.4727	4553470.9549	5.033
10	8439954.5993	4553468.1163	4.223
11	8439957.9164	4553465.2243	4.400
12	8439961.1853	4553462.4149	4.310
13	8439964.5906	4553459.548	4.451
14	8439966.7768	4553457.6093	2.922
15	8439967.8799	4553456.6104	1.488
16	8439968.9762	4553457.9919	1.763
17	8439971.2166	4553456.1818	2.880
18	8439974.3386	4553453.7764	3.941
19	8439978.1187	4553450.9234	4.735
20	8439982.0232	4553448.0832	4.828
21	8439985.877	4553445.1482	4.844
22	8439989.5458	4553442.5078	4.520
23	8439992.9482	4553439.9591	4.251
24	8440000.3321	4553440.522	7.405
25	8440020.8858	4553434.5085	21.415
26	8440017.6809	4553418.2785	16.543
27	8440016.2433	4553411.2181	7.205
28	8440021.5654	4553410.1789	5.422
29	8440041.223	4553406.2513	20.046
30	8440086.0245	4553396.6569	45.817
31	8440089.1227	4553411.1466	14.817
32	8440106.4438	4553485.1783	76.031
33	8440108.3617	4553493.1241	8.174
34	8440108.3939	4553498.3008	5.176
35	8440107.686	4553500.0048	1.845
36	8440092.5629	4553507.0824	16.697
37	8440084.0922	4553511.158	9.400
38	8440075.67	4553515.1129	9.304
39	8440063.3535	4553521.0903	13.690
40	8440048.3009	4553528.2747	16.679
41	8440038.8468	4553534.1013	11.105
42	8440035.4036	4553538.7872	5.814
43	8440017.1673	4553562.9551	30.276
44	8440013.7937	4553564.0245	3.539
45	8440010.9232	4553562.6501	3.182
46	8439975.627	4553534.4382	45.185
47	8439935.5175	4553502.4454	51.306
48	8439929.6273	4553497.6741	7.580
1	8439927.7259	4553494.7401	3.496

Կատարող
Исполнитель

ՀԱՅԱՄԻԱՓԱԳԻՏ ՍՊԸ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am
0025 Республика АРМЕНИЯ
г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@armproject.am

Պատվիրատու
Заказчик

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ «Էներգոշին Պլյուս» ՍՊԸ

Նախագծի անվանումը

432 ԱՇԱԿԵՐՏՈՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Наименование проекта

СРЕДНАЯ ШКОЛА НА 432 УЧЕНИКА

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ԲԼԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

СРЕДНЯЯ ШКОЛА В ТАШИРЕ ЛОРИЙСКОГО МАРЗА РА

Փուլ Стадия	Մաս Часть	Ալբոմ Альбом	Գիրք Книга	Հատոր Том
ԱՆ РП	ԳՀ ГП	1		

Գծագրի անվանում
Наименование чертежа

Հողամասի շրջադարձային կետեր

Գծագիր Чертеж ԳՀ- ГП- 3 | Էլ.ֆայլ Эл.файл G100.05

Մասշտաբ Масштаб 1:500

Կատարող բաժնի նվանումը
Наименование исполнительного отдела

L. Քրիստափորյանի ճարտ. արվեստանոց

Арх. мастерская Л. Христафоряна

ՆԳԲ ГАП		Օհանյան Է. Оганян Э.
ՆԳԻ ГИП		Տանունց Ա. Джанунц А.
Բաժնի ղեկ. Рук. маст.		Խրիստափորյան Լ. Христафорян Л.
Գլխ. կոնստր. Гл. констр.		Սողոմոնյան Հ. Согомонян Г.
Նախագծող Проектир.		Օհանյան Է. Оганян Э.
Ստուգեց Проверил		Խրիստափորյան Լ. Христафорян Л.

Պատվեր Заказ ՆՊ001-ԷՕ24

ամսաթիվ Дата	արխիվ. համար Архив. номер	գույքահամար Инвен. номер
	3591	

Փոփոխություններ
Изменения

3	
2	
1	
0	

էջ стр.	5	Ֆորմատ Формат	A2

1.5.5 *Իրավիճակային հատակագիծ*



Կատարող
Исполнитель

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
Էլ. փոստ info@armproject.am
0025 Республика АРМЕНИЯ
г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@armproject.am

Պատվիրատու.
Заказчик
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Կապալառու.
«ԷՆԵՐԳՈ ՇԻՆ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ

Նախագծի անվանումը
432 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԻՊԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ
Наименование проекта
Типовые проекты общеобразовательного комплексов на 432 ученика

432 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԻՊԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՏԵՂԱԿԱՊՈՒՍ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅՈՒՄ

Привязка типового проекта общеобразовательного комплекса в городк Ташир

Փուլ Стадия	Մաս Часть	Գիրք Альбом	Գիրք Книга	Հատոր Том
ԱՆ РП	ԳՀ ГП	1	1	

Գծագրի անվանում
Наименование чертежа

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾ

Գծագիր Чертеж	Էլ.ֆայլ Эл.файл
Մասշտաբ Масштаб	1:50, 1:20

Կատարող բաժնի անվանումը
Наименование исполнительного отдела
Լ. Խրիստափորյանի ճարտարապետական արվեստանոց
Архитектурная мастерская Л. Христафоряна

ՆԳԵ ГАП		Օհանյան Է. Оганян Е.
ՆԳԻ ГИП		Ջանունց Ս. Джануниц А.
Բաժ. ղեկ. Рук. отд.		Լազարյան Ս. Лазарян С.
Գլխ.կոնստր. Гл.констр.		Սողոմոնյան Հ. Согомонян А.
Նախագծող Проектир.		Ալեքսանյան Հ. Алексанян А.
Ստուգեց Проверил		Մարտիրոսյան Մ Мартиросян М.

Պատվեր Заказ ԱՊ001-Է024

ամսաթիվ Дата	արխիվ. համար Архив. номер	գրաքանակի Инвен. номер
	3591	

Փոփոխություններ Изменения
3
2
1
0

էջ стр.	31	Չափսաչափ Формат	A2



Կատարող
Исполнитель

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am
0025 Республика АРМЕНИЯ
г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@armproject.am

Պատվիրատու
Заказчик

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ «Էներգոշին Պլյուս» ՍՊԸ

Նախագծի անվանումը

432 ԱՇԱԿԵՐՏՈՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Наименование проекта

СРЕДНЯЯ ШКОЛА НА 432 УЧЕНИКА

ՀՅ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

СРЕДНЯЯ ШКОЛА В ТАШИРЕ ЛОРИЙСКОГО МАРЗА РА

Փուլ Стадия	Մաս Часть	Գլխավոր Альбом	Գիրք Книга	Հատոր Том
ԱՆ РП	ԳՀ ГП	1		

Գծագրի անվանում
Наименование чертежа

Գլխավոր հատակագիծ

Գծագիր Чертеж	ԳՀ-ԳՊ 5	Էլ. ֆայլ Эл.файл	G100.07
Մասշտաբ Масштаб	1:500		

Կատարող բաժնի ենթաբաժնի անվանումը
Наименование исполнительного отдела

Լ. Քրիստափորյանի ճարտ. արվեստանոց

Арх. мастерская Л. Христафоряна

ՆԳԵ ГАП		Օհանյան Է. Оганян Э.
ՆԳԻ ГИП		Ջանունց Ա. Джанунц А.
Բաժնի ղեկ. Рук. маст.		Խրիստափորյան Լ. Христафорян Л.
Գլխ. կոնստր. Гл. констр.		Սողոմոնյան Հ. Согомонян Г.
Նախագծող Проектир.		Օհանյան Է. Оганян Э.
Ստուգեց Проверил		Խրիստափորյան Լ. Христафорян Л.

Պատվեր Заказ ՆՊ001-ԷՕ24

ամսաթիվ Дата	արխիվ. համար Архив. номер	գույքահամար Инвен. номер
	3591	

Փոփոխություններ
Изменения

3	
2	
1	
0	

էջ стр	7	Ֆորմատ Формат	A2

1.5.6 *Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ*



Կառուցող
Исполнитель

ՀԱՅԱՐԱՏՈՒՆ

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1

էլ. փոստ info@armproject.am

0025 Республика АРМЕНИЯ
г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@armproject.am

Պատվիրատու
Заказчик

Հայաստանի Տարածքային Զարգացման Ֆիմնադրամ
«ԲԵՄԻՄ» ՍՊԸ

Նախագծի անվանումը

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ
432 ԱՇԱՀԵՐՏՈՒ ՄԻՏՆԱՅԱՆ ԴՊՐՈՑ

Փուլ Стадия	Մաս Часть	Գրքույկ Альбом	Գիրք Книга	Հատոր Том
ԱՆ	ՇԱ			

Գծագրի անվանում
Наименование чертежа

ՇԻԼԱՊԱՐԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գծագիր ՇԱ-02 Էլ.ֆայլ

Մասշտաբ
Масштаб 1:200

Կառուցող բաժնի անվանումը
Наименование исполнительного отдела

ԳԱՊ ГАП		Լազարյան Ս. Лазарян С.
ԳԻՊ ГИП		Դանիելյան Ա. Даниелян А.
Բաժ. ղեկ. Рук. отд.		Սողոմոնյան Հ. Согомонян А.
Գլխ.կոնստր. Гл.констр.		Սողոմոնյան Հ. Согомонян А.
Նախագծող Проектир.		Գուլյան Ս. Гулян А.
Ստուգող Проверил		Պետրոսյան Գ. Петросян Г.

Պատվեր
Заказ L/T001-ԱԲ24

ամսաթիվ Дата	արխիվ. համար Архив. номер	գրաքննանի Инвен. номер
	3582	

Փոփոխություններ
Изменения

3	
2	
1	
0	
Էջ	Формат A1



Կատարող
Исполнитель

0025 Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am

0025 Республика АРМЕНИЯ
г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@armproject.am

Պատվիրատու
Заказчик

Հայաստանի Տարածքային Զարգացման Պիտանարան
«ԲԼԵՍԻԱ» ՍՊԸ

Նախագծի անվանումը

ՀՀ ԼՈՌԻ ՍՍՈՒՊ ՏԱՇԻՐ ԲԱՆԱՎԱՆԱՅԻՆ
432 ՍԵՂԱՆԱՏԵՌԻ ՄԻՋՆԱԼԱՊԿ ԴՊՐՈՑ

Փուլ Стадия	Մաս Часть	Նյութ Альбом	Գիրք Книга	Հատոր Том
ԱՆ	ՇԿ			

Գծագրի անվանում
Наименование чертежа

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԾԱԳՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՍԽԵՄԱՅՈՒՄԲԵՐ

Գծագրի Чертеж	ՇԿ-03
Էլ.ֆայլ	
Մասշտաբ Масштаб	1:200

Կատարող բաժնի անվանումը
Наименование исполнительного отдела

ԳԱՊ ГАП		Կարապետյան Ս. Аваграян С.
ԳՄԻ ГИП		Ջանունց Ա. Джанунц А.
Բաժ. ղեկ. Рук. отд.		Սողոմոնյան Գ. Согомонян А.
Գլխ.կոնստր. Гл.констр.		Սողոմոնյան Գ. Согомонян А.
Նախագծող Проектир.		Ղուլյան Ս. Гулян А.
Ստուգող Проверил.		Պետրոսյան Գ. Петросян Г.

Պատվեր Заказ: 1/ՊՈՍՏ-ՄԲՏ24

Ամսաթիվ Дата	արխիվ. համար Архив. номер	գրաքանակ Инвен. номер
	3582	

Փոփոխություններ
Изменения

3	
2	
1	
0	

Թող.		Формат	A1

1.5.7 *Ժամանակացույց*

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Խումբը	Աշխատանքների անվանումները	Չ.մ.	Ծավալը	Հիմնավորումը	Աշխատատարությունը Նորմատ. մ-ժամ	Աշխատատարությունը Ընդ. մարդ-հերթ	Հերթափոխների թիվը	Բանվորների թիվը	Տևողությունը, օր	I ՏԱՐԻ (ամիսներ 1–12)	II ՏԱՐԻ (ամիսներ 13–22)
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	Ա	**Նախապատրաստական և քանդման աշխատանքներ**					300	1	10	30	12	
		Տարածքի ժամանակավոր ցանկապատում, ժամանակավոր կոմունիկցիաների տեղադրում, գոյություն ունեցողների հեռացում կամ վերատեղադրում, շինարարական մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ, վարչատնտեսական և սանիտարահիգիենիկ տարածքների կարգավորում										
2	Բ	**Հողային աշխատանքներ**	$մ^3$	4800.0			1800		10	180	10 10	
	Գ	**Երկաթբետոնե կառուցվածքներ և շարվածք**										
3		Հիմքերի նախապատրաստական շերտի իրականացում	$մ^2$	80.0	11-01-002-04	2.5	25.00					
4		Հիմքերի իրականացում	$մ^3$	600.0	0.-01-001-19	4.86	364.50				15	
5		Ջրամեկուսացման աշխատանքներ և ներքին հետլիցք					20.00					
6		Երկաթբետոնե սյուների իրականացում	$մ^3$	130.0	06-01-107-3	12.72	206.70	1.0	15	240	15	
7		Երկաթբետոնե հեծանների իրականացում	$մ^3$	330.0	06-01-109-1	16.87	695.89					
8		Երկաթբետոնե ծածկերի իրականացում	$մ^3$	1180.0	06-01-110-1	8.67	1278.8					
9		Երկաթբետոնե պատերի իրականացում	$մ^3$	400.0	06-01-110-1	8.67	433.5					
10		Այլ երկաթբետոնե աշխատանքներ					100.00					
11		Շարվածքային աշխատանքներ					2100.0		10	210	10	
12	Դ	**Տանիքային աշխատանքներ**					600.00		10	60	10	
13	Ե	**Բացվածքների լրացում, հատակներ, ներքին և արտաքին հարդարում**					3840.0		16	240	16	
14	Զ	**Կաթսայատան, մարզադահշտի,կոյուղու մաքրման սարքավորման, ոռոգման ջրի ռեզերվուարի,հակահրդեհային ավազանի,անցուղու, պարիսպների կառուցում**					2100.0		10	210	10	
15	Է	**Ինժեներական ցանցեր**		408.0			2880.0		8	360	8 8 8 8 8	
16	Ը	**Բարեկարգում և կանաչապատում**					1200.0		10	120	10	
		Ընդհանուր					**17944**			1650		

Բանվորների առավելագույն քանակը **44** մարդ, միջին քանակը **28** մարդ

Բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը 1,57

Աշխատանքների համատեղման գործակիցը 1650/660= 2,55

Կատարող Исполнитель

ՀԱՅԱՐԱՏ ԱԳՀ

0025 Հայաստանի Հանրապետություն ք. Երևան, Չարենցի 1
էլ. փոստ info@armproject.am
0025 Республика АРМЕНИЯ г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@armproject.am

Պատվիրատու Заказчик

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ «ԲԼԵՍԻ» ՍՊԸ

Կոմպլեքսի անվանումը

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏՈՒՇԻ ՄԱՍԻՎԱՅՈՒՄ 432 ԱՇԽԱՏԵՏՈՒ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Փուլ Стадия	Սաս. Часть	Գլուխ Раздел	Գիրք Книга	Հատոր Том
ԱՆ	Շ/Ա			

Գծագրի անվանումը Наименование чертежа

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գծագիր Շ/Ա-04 Էլ.Փոստ

Մասշտաբ Масштаб

Կառույցի բաղկի անվանումը Наименование испытательного отдела

Լ/Ն ԳԱՊ		Լուսարյան Ս. Лусарян С.
Լ/Ն ԳԻՊ		Ցանուց Ս. Даноуц А.
Բաժ. պետ. Рук. отд.		Սողոմոնյան Ղ. Согомонян А.
Գլխ.կոնստր. Гл.констр.		Սողոմոնյան Ղ. Согомонян А.
Նախագծող Проектир.		Ղուկասյան Ս. Гукасян А.
Ստուգող Проверил		Պետրոսյան Գ. Петросян Г.

Պատվեր Заказ Ս/Գ001-ՀԲ24

Ամսաթիվ Дата	Արխիվ. համար Архив. номер	Գրգռագրանցման Инвен. номер
	3582	

Փոփոխության բնույթը Изменения

3	
2	
1	
0	

Էջ | Формат A1

1.5.8 *Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ*

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը (Նախագծային փուլ) իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են՝

1. ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:

2. ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակիարարում

- Տաք ջրամատակարարում:

- Հրդեհամարման համակարգ:

- Կենցաղային կոյուղի:

<u>Ջրամատակարարում</u>

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման համակարգի սնուցումն նախատեսվում է իրականացնել համայնքային ցանցից: -1 հարկում նախատեսված են ռեզերվուարներ խմելու ջրի և հրդեհամարման կարիքների համար, յուրաքանչյուրը 10.0 մ3 ծավալով: Ռեզերվուարներ ջուրը պոմպերի միջոցով տրվում է ջրամատակարարման և հրդեհամարման ցանց:

Նախատեսված է Wilo մակնիշի Wilo SiBoost Smart 4 HelixVE 404 խմելու ջրի պոմպային կայանք: Պոմպային կայանքը բաղկացած է 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում:

Ռեզերվուարներում նախատեսված են մակարդակաչափեր, որոնք ազդանշան են ուղարկում ջրամատակարարման խողովակի վրա տեղադրված սոլենոիդ փականին, երբ ռեզերվուարներում սպառվում է խմելու-կենցաղային կարիքների համար նախատեսված ջրաքանակը, սոլենոիդ փականը փակվում է, թույլ չտալով ռեզերվուարներում՝ ջրի հրդեհամարման անձեռնմխելի քանակի նվազում:

Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է տանիքում տեղակայված կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Հրդեհամարման համակարգ

Դպրոցում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով:

Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման Ø57x3.5մմ տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից:

Նախատեսված են հրշեջ պահարաններ 2 հրշեջ ծորակի տեղադրման համար:

Հրշեջ պահարանները համալրված են l=20.0մ երկարության փողրակներով:

Կենցաղային կոյուղի

Կենցաղային կոյուղու ցանցը ինքնահոս է: Նկուղային հարկի սանհանգույցի համար նախատեսված է կոյուղու ճնշումային սարքավորում Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

Կեղտաջրերը ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է տարածքում նախատեսված, կոյուղու մաքրման կայանին:

Բոլոր համակարգերը մոնտաժից հետո ենթակա են հիդրավլիկական փորձարկման՝ համաձայն գործող նորմաների:

1.5.9 *Ջեռուցում և օդափոխություն*

1. Դպրոցի ջեռուցման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն՝

ա) Ճարտարապետաշինարարական գծագրերի, որոնք մշակվել են "Հայնախագիծ" ԲԲԸ-ում

բ) Գործող համապատասխան շինարարական նորմերի

ա) ՀՀՇՆ IV-12.02.01-04 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

բ) ՀՀՇՆ 24-01-2016՝Շենքերի ջերմային պաշտպանություն՝

գ) ՀՀՇՆ 22-01-2023 "Շինարարական կլիմայաբանություն"

2. Արտաքին օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը՝

- Ջեռուցման և օդափոխության համակարգերի համար t= -210c

3. Ջերմատարը ջուր 80÷65^{0}c ջեռուցման և օդափոխության համակարգերի համար:

4. Սենյակների ներքին ջերմաստիճանը ընդունված է համաձայն վերը նշված շինարարկան նորմերի:

5. Ջերմամատակարարումը իրականացվում է սեփական կաթսայատնից տեղակայված դպրոցի տարածքում:

2. Ջեռուցում և ներածման համակարգերի ջերմամատակարարում

1. Դպրոցում նախատեսված է ջրային ջեռուցում, երկխողովականի, համընթաց շարժումով, ջրի մեխանիկական շրջանառությամբ համակարգ:

2. Առաջին հարկի մարտկոցների մագիստրալ մատակարար և հետադարձ խողովակաշարերը անցնում են հատակի հաստության միջով, իսկ երկրորդ հարկի ջեռուցման մարտկոցների մատակարար և հետադարձ խողովակները անցնում են առաջին հարկի առաստաղի տակով:

3. Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են ալյումինե ջեռուցման մարտկոցներ:

4. Մարտկոցների ջերմատվությունը կարգավորելու տեղադրվում են ջերմակարգավորիչ փականներ, իսկ հետադարձի վրա փակող փական սպասարկման համար:

5. Բոլոր ջեռուցման սարքերի վրա նախատեսված են օդի հեռացման փականներ և դատարկման փականներ:

6. Ջերմային հանգույցում օդահաեռացման նպատակով տեղադրվում են ավտոմատ օդահաններ:

7. Ջեռուցման բոլոր մագիստրալ խողովակները մեկուսացվում են 10մմ հաստությամբ սինթետիկ կաուչուկե մեկուսիչներով:

8. Ներածման համակարգերի ջերմամատակարարման խողովակները ընդունված են մետաղից և ներկվում են յուղաներկով երկու անգամ, որից հետո մեկուսացվում են 15մմ հաստությամբ մեկուսիչներով բոլոր տրամագծերի համար:

3.Օդափոխություն

1. Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:

2. Էներգոարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր ռեկուպերատորով:

3. Համակարգերի համարները և սպասարկվող սենյակները ներկայացված են օդափոխության սարքավորումների բնութագրում:

4. Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում:

Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական էլ. շարժաբերով: Փականը բլոկված է արտածման օդափոխիչի հետ:

5. Սանհանգույցներից կազմակերպված են արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:

6. Ապաստարանի ներածման սարքը տաքացնում է օդը էլ. եղանակով և միացված է էլ. գեներատորին:

7. Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով:

8. Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում:

1.5.10 *Արևային համակարգ*

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր միջնակարգ դպրոցին պատկանող տարածքում 127.6 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի նախագծման համար հիմք են հանդիսացել.

1. Տեղանքի հատակագծերը

2. Տեղազնման արդյունքները

3. Տեխնիկական առաջադրանքը

Նախագծով նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում գտնվող նոր կառուցվող շինության տանիքին:

ՖՎ վահանակները տեղակայվելու են տանիքին՝ տանիքի ուղղությանը զուգահեռ, 19° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբյուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների ԱՀԿՈՒ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 60 կՎտ է /Եռաֆազ/:

Տանիքին ՖՎ վահանակները տեղակայվում են ալյումինե կրող հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված ալյումինից են:

Փոխակերպիչը և ՓՀՀՏ-ն տեղադրվում են շենքի ներսում առանձին հատկացվածսենյակում: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն մալուխով շենքի մուտքային բաշխիչ վահանին էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները իջեցվում են շենքի հորանների միջով՝ ծալքախողովակի մեջ և միանում է շենքի էներգետիկական սենյակում գտնվող փոխակերպիչներին: Շենքի էլեկտրամատակարարումը և դպրոցի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային

էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: ՖՎՀ-ն միացվում է դպրոցի գոյություն ունեցող հողանցման ցանցին:

1.5.11 *Ջերմամեխանիկական մաս*

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում միջնակարգ դպրոցի ջերմամատակարարման համար կաթսայատան նախագիծը կատարվել է համաձայն՝

ա) ջերմային ծախսերի: Տես աղյուսակ N1:

բ) ճարտարապետաշինարարական գծագրերի:

գ) կաթսայատան տեղակայման նորմերի ՇՆ և կ II-35-76:

2. Նախագծվող կաթսայատունը սպասարկում է միայն Տաշիր բնակավայրի միջնակարգ դպրոցին:

3. Ջերմամատակարարման համակարգը փակ է:

4. Ջերմատարը ջուր՝ t1=80Եc, t2=65Եc (հաշվարկային):

5. Վառելիքը՝ բնական գազ:

6. Կաթսայատան ջրամատակարարումը՝ ջրմուղից:

Կաթսայատան աշխատանքային նախագիծը կներկայացվի տեխնիկական անվտանգության փորձաքննության:

<u>2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ</u>

1. Ելնելով ջերմային ծախսերից նախագծում նախատեսված են ավտոմատացված ջրային երկու կաթսաներ Q=954 կՎտ նոմինալ ջերմարտադրողականութուններով:

2. Կաթսաները համալրված են ավտոմատացված գազի այրիչներով:

3. Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսվում է ջրաջրային թերթավոր տաքացուցիչներ 2 հատ (մեկը պահուստային) Q=180 կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը:

4. Կաթսայատանը տեղակայված են նաև , ջրատաքացուցիչները, թաղանթային ընդարձակիչ անոթը, կոլեկտորները, պոմպերը:

<u>3. ԾԽԱԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄ</u>

1. Ընտրված կաթսաները ունեն փոքր աէրոդինամիկական դիմադրություն, որի շնորհիվ ծխագազերի արտանետումը ընտրված է բնական:

2. Ծխնելույզի տրամագիծը ընտրված է Մ426x10մմ:

3. Վառելիքի այրման համար օդաքանակը վերցվում է անմիջապես կաթսայատան սրահից, իսկ կաթսայատուն օդի մուտքը կատարվում է կաթսայատան դռան վերևում նախատեսված ճաղաշարի միջոցով:

4. ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Կաթսայատան սրահում նախատեսված է ներածման և արտածման օդափոխություն ենական դրդմամբ:

Արտածումը իրականացվում է Մ300 երկու դեֆլեկտորների միջոցով, իսկ օդի ներածումը՝ նախատեսված 1500x900(h) ճաղաշարի միջոցով:

5. ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

1. Ջերմության կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով բոլոր խողովակները T1, T2, T3, T4 , և սարքավորումները մեկուսացվում են:

2. Մինչև մեկուսացնելը խողովակների մակերեսները մաքրվում են և ներկվում հակաքայքայիչ լաքով հետո մեկուսացվում են ռետինե խողովակաձև մեկուսիչով:

6.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄՈՆՏԱԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են էլեկտրոեռակցումային ԳՈՍ 10704-91 և ջրագազամուղային ԳՈՍ 3262-82 պողպատյա խողովակներով:

2. Բոլոր խողովակաշարերը մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավլիկ փորձարկման:

3. Խողովակաշարերը մոնտաժվում են i=0.002մ/մ թեքությամբ:

Խողովակաշարերի վերին բարձր կետերից կատարվում է օդի հեռացում, իսկ ներքևի ցածր կետերից՝ ջրի դատարկում:

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ։

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները։

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում։

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների։

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով։

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1.Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված։

2.Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով։

3.Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները։

3Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում։ Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները։

4Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը։

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Շինարարության պայմանները

ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրի միջնակարգ դպրոցի շինարարության տեղամասն՝ ըստ երկրաբանական հետազննության արդյունքների ռելիյեֆը հարթէ, փոքր թեքությամբ:
Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկաերկրաբանական պրոցեսներն ու երևույթները բացակայում են:

Օբյեկտի ճարտարապետական և կառուցվածքային բնութագիրը Դպրոցի շենքը երկհարկանի է, մասնակի նկուղային հարկում նախատեսվում է ապաստարան ելքային միջանցքով: Շենքը ուղղանկյունաձև ուրվագծի է՝ 91,5 մ x 35,0 մ հիմնական առանցքային չափսերով: Տանիքածածկույթն իրականացված է մակահալեցվող փաթթոցային նյութի 2 շերտից: Շենքի առավելագույն բարձրությունը մոտ 10 մ է: Կառուցվածքային համակարգը շրջանակային է, հիմքերը ժապավենային:

Դպրոցի բակային տարածքում նախատեսված են նաև՝ բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ և վազքուղի, կաթսայատուն, սալվածք, հարթակներ, սիզամարգեր,

2.2 Աշխատանքների կատարման սխեմա

<u>Նախապատրաստական փուլ</u>

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,
- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 660 օրացուցային օր (22 ամիս, 2 տարի), բանվորների առավելագույն քանակը 44 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6 Շինարարական մեքեմնաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Մոբիլային վերամբարձ կռունկ	XCT25L5_S	2
	Հիմնական վերամբարձ մեխանիզնի հնարավոր այլ տարբերակներ՝	RDK 250 (թրթուրավոր). KC 55713-6 ГАЛИЧАНИН,	
2	Էքսկավատոր՝կախովի սարքավորումներով	ET-14 (կամ նմանատիպեր)	1
3	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	1
4	Բուլդոզեր	CAT CS 563 (կամ նմանատիպեր)	
5	Գլդոն	CAT D6R (կամ նմանատիպեր)	
6	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	2
7	Թրթռիչ խորքային էլոկտրական	ИВ-102А	2
8	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	2
9	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	1
10	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	2
11	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
12	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
13	Հետահար մուրճ		1
14	Ավտոինքնաթափ		Ըստ հաշվ.
15	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	Ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է ET 14 էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 4600 մ³

Հետլիցք՝ 600 մ³

Ավելացած 4000մ³ հողային զանգվածը կտեղափոխվի Տաշիր բնակավայրի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Դպրոցի հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ.	Ծավալը
1	Փորվածքների մշակում	մ³	4600,0
2	Հիմնային աշխատանքներ	մ³	600,0
3	Ե/բ սյուներ	մ³	130.0
4	Ե/բ հեծաններ	մ³	330.0
5	Ե/բ պատեր	մ³	400,0
6	Ե/բ ծածկեր	մ³	1180,0
7	Ամրանավորում	տ	400,0

2.5.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

a)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{Ё.ї.} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 44 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 660 օր

$W_{խ.տ.}$= (3 x 0.016 + 44 x 0.025) x 720 =757.67 մ³/շին. ժամ. կամ 1.148 մ³/օր:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 8000 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

U_1 = 8000 x 0.0015 x 300 = 3600 մ³/շին. ժամ. կամ 12 մ³/օր

c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_2 = S_2 \times K_2 \times T$, որտեղ՝

S_1 – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 մ²,

K_1 – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ³,

T –ժամանակահատվածը օրերով, 450

$Մ_2$ = 10 x 0.14 x 720 = 1008 մ³/շին. ժամ. կամ 1.4 մ³/օր

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5365.67 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող դպրոցը սնող ջրագծից:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեգում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

2.5.2 *Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը*

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և

համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապառասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատծում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГОСТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ , առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով `համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրորի:
- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը՝ լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապ__ ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:
- Բեռնակալիչ հարմարանքները և տարան (վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ ` 200 մ2 մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:

- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ»:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակայնի և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

-Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների համապատասխան:

Կանաչապատ տարածքի ոռոգման ջրամատակարարման համար կառուցապատող ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի լիազորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Կանաչապատման նախագծի հիմք են հանդիսանում պատվիրատուի կողմից տրամադրվող գլխավոր հատակագիցը և համայնքապետի կոմղից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Համաձայն կանաչապատման նախագցի կանաչապատման մակերեսը կազմում է 7149.7 քմ:

Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցվելով դենդրոլոգի հետ առաջարկվում է տեղադրել ստորեվ նշված բույսերի տեսականին համապատասխան քանակներով՝

Սյունաձև թույա – 22 հատ
Բարդի Արծաթաձայլ - 72 հատ
Գնդաձև իլենի – 24 հատ
Թղկի սրատերև կարմիր – 20 հատ
Սիզամարգ – 7149.7 մ^2

Կանաչապատման սխեման ներկայացված է ստորև:

ՌԱՍՏԱՐԿԱՐ
432 ՏԵՂԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԱՐԿԱՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԵՎ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆ

3.1 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ^2-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ^2:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ n_6 = 0.006 մ^3/մ^2

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ S_1 = 7149.7 մ^2,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 7149.7) \times 2 \times 175 = \underline{\mathbf{15014}} \text{ մ}^3\text{/տարի}$$

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները

Նոր միջնակարգ դպրոցը նախատեսվում է կառուցել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայրում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է լավային սարահարթի՝ անցնող ալուվիալ-պրոլուվիալ հարթավայրի սահմաններում:

Տեղամասի ռելիյեֆը հարթ է, մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1500-1502 մ սահմաններում:

Հողի սառեցման խորությունը՝ 71սմ:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուվածքում մասնակցում են չորրորդական հասակի հրաբխային բազալտային լավաները, ծածկված ժամանակակից էլուվիալ, դելուվիալ, ալուվիալ-պրոլուվիալ գոյացումներով:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը վերևից-ներքև ներկայացված է հետևյալ գրունտների շերտերով.

Շերտ 1 - բուսահող ավազակավային, սևգույնի, 0,7-1,5 մ հզորությամբ:

Շերտ 2 - ավազակավ, տեղ-տեղ անցնող կավի, դարչնագույն, անցնող դեղնագորշի ու գորշի, դեղնա-կանաչավուն երանգով, միջին և թույլ հղկված կոպիճով 10-15%, խոնավ, կիսակոշտ: Շերտը տեղամասում տարածված է ամենուրեք, 4,2-6,3 մ հզորությամբ:

Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գոյացումներ:

Շերտ 3 - բազալտ մոխրագույն, ճեղքավոր, ծակոտկեն, մեծաբեկորային ու խճային անջատումներով, շերտի վերին մասում, 0,3-0,8 մ հզորությամբ՝ հողմահարված, ճեղքավոր, մեծաբեկորների ու խճի տեսքով, կավավազով 5-10%: Շերտը բացահայտվել է թիվ 2 և 4 հորատանցքերում 7,5-7,7 մ խորությունների վրա, 4,5 մ բացված հզորությամբ:

Չորրորդական հրաբխային լավաներ:

Ստորգետնյա (գրունտային) ջրերը տեղամասում բացահայտվել են թիվ 2 և 4 հորատանցքերում 7,2 և 7,3 մ խորությունների վրա: 2. 1 աղյուսակում բերված են գրունտային ջրերի կայունացած մակարդակի չափման տվյալները:

Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող Ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ տեղամասում չեն դիտվել:

4.2 Կլիմայական պայմանները

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կաթնառատ բնակավայրի տարածքում, ուստի բերում ենք տեղանքին համապատասխան կլիմայական ցուցանիշները: ՈՒսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 16,4˚C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 73% (ժ.15- ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -4,6˚C է, թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ: Ստորև աղյուսակի

տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Տաշիր քաղաքի օդերևութաբանական կայանի դիտարկումների

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական ջերմաստիճանը, ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Տաշիր	1507	-4.6	-3.7	0.0	5.9	10.3	13.7	16.4	16.1	12.4	7.6	2.1	-2.3	6.2	-34.1	34.6

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15^{00} -ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Տաշիր	70	71	73	73	76	77	77	75	77	76	74	71	73	58	63

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական, մմ, օրական առավելագույնը													Ձյան ծածկույթը		
	ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Տաշիր	22 26	28 46	42 33	76 36	131 116	139 88	81 61	62 54	53 35	49 40	33 33	19 29	735 116	67	73	150

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների								Անդորրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
34.Տաշիր	հունվար	19	3	2	4	10	32	19	11	38	3.2	ՀՍԱՐ	2.4	ՀՎԱՐՄ	5.1
		2.6	2.0	2.2	3.0	4.2	5.1	4.9	3.3						
	ապրիլ	35	10	4	5	8	16	7	15	37	2.1				
		2.7	2.6	2.3	2.5	2.9	4.0	3.4	2.8						
	հուլիս	45	23	5	2	2	2	5	16	46	1.2				
		2.5	2.4	2.4	2.5	2.4	3.0	2.5	2.6						
	հոկտեմբեր	39	7	3	4	6	13	11	17	44	1.5				
		2.6	2.2	2.0	2.1	2.5	3.6	3.2	2.7						

4.3 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Տաշիր բնակավայրում /բնակչությունը 8667 մարդ/ չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ^3;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ^3;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ^3;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ^3:

4.4 Ջրային ռեսուրսներ

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն Տեղեկատվությունը ներկայացված է ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2024թ. 1-ին եռամսյակի հրապարակված տեղեկագրի: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս). «լավ» (2-րդ դաս). «միջակ» (3-րդ դաս). «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ. ապա վերջնական «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով: Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գործունեության ընթացքում մակերևութային ջրերի վրա ազդեցություն չի նախատեսվում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 119 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 25 շատրվանող հորատանցք, 47 չշատրվանող հորատանցք և 47 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտակումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորեկրյա ջրերի որակի մոնիթորինգ 56 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ինդիկատորային ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր):

4.5 Հողածածկ

Տեղամասի շրջանում զարգացած են մարգագետնային սևահողանման, գետահովտադարավանդային հողերը և սևահողերը: Սևահողերում ահողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով:

Մարգագետնատափաստանային սևահողանման հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր: Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է:

Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով
Մարգագետնասևահողային հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա քաղցրահամ ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք հիմնականում գտնվում են 1.5-3.0մ խորության վրա: Ստորին հորիզոններում պարզորոշ նկատվում են գլեացման հետքեր և երկաթի օքսիդների զգալի կուտակումներ:

4.6 Կենսաբազմազություն

Լոռու ֆլորիստիկ շրջանում էնդեմիկ բույսերի քանակը՝ 7 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակերի թիվը՝ 47 է, ըստ („Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա„ ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ): Գրականության և գիտական տեղեկատվության տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված տարածքը ծածկված է տափաստանային և մարգագետնատափաստանային բուսականությամբ, որը գտնվում է խիստ անմխիթար վիճակում ինտենսիվ գերարածեցման արդյունքում և առանց վիճակը բարելավելու հատուկ միջոցների՝ որպես արոտավայր մեծ արժեք չունի: Տարածքի բուսական աշխարհը ներկայացված է սովորական տափաստանային և մարգագետնատափաստանային բույսերով՝ կերային արժեք չունեցող մոլախոտերի մասնակցությամբ: Բուն ուսումնասիրվող տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան, քանի որ այդ տարածքները ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, իսկ բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են:

Տեղանքին բնորոշ կաթնասուններից առավել տարածված են՝ Սովորական դաշտամուկ (Microtus arvalis), Սովորական աղվես (Vulpes vulpes), շնագայլ (Canis aureus L.): Հերպետոֆաունայից՝ Կանաչ դոդոշ (Bufo viridis), Միջին մողես (Lacerta media): Թռչուններից տարածաշրջանում հանդիպող տեսակներն են՝ դաշտային (Alauda arvensis L.) և անտառային (Lullula arborea L.) արտույտներ, անտառային ձիաթռչնակ (Anthus trivialis L.), սովորական քարաթռչնակ (Oenanthe oenanthe L.), ժուլան (Lanius collurio L.), մոխրագույն շահրիկ (Sylvia communis Latham), կանեփնուկ (Linaria cannabina L.) և սովորական կկու (Cuculus canorus L.), սովորական հողմահար բազե (Falco tunninculus L.) և տափաստանային ճուռակ (Buteo rufinus Cretzschmar.), ինչպես նաև սինաթրոպ տեսակներ՝ գյուղական (Hirundo rustica L.), տնային ճնճղուկ (Passer domesticus L.), գորշ ագռավ (Corvus corone L.) և կաչաղակ (Pica pica L.):

Հարկ է նշել, որ բուն ուսումնասիրվող տարածքնում Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ չկան, ինչը բացատրվում է այդ տարածքի բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված և տեղանքը բավականին դեգրադացված լինելու հանգամանքով:

4.7 Հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ)

(պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը: Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի:

4.8 Պատմության և մշակութային հուշարձաններ:

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով, որոնք զբաղեցնում են մոտ 20000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են ՀՀ Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին, ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին օրենքներով, N438 ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N438 որոշման մեջ լրացում կատարելու և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը հաստատելու մասին, N 104- Ն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին, ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին կառավարության որոշումներով:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման հավելված 6-ի համաձայն Լոռու մարզի Կաթնառատ բնակավայրում ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան:

4.9 Բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման Լոռու մարզում է գտնվում 3 երկրաբանական, 1 Ջրագրական, 1 կենսաբանական հուշարձան: Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում բնության հուշարձանների հետ:

4.10 Սոցիալ-տնտեսական բնութագիրը

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի

արդյունաբերության հիմնական ուղղու-թյուններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): 2017թ. մարզի տնտեսության հիմնական հատված-ների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

արդյունաբերություն ՝ 8.9%,

գյուղատնտեսություն 8.7%,

շինարարություն ՝ 4.1%,

մանրածախ առևտուր՝ 3.3%,

ծառայություններ՝ 1.3%

Տաշիր քաղաքը (2018թ. տարեսկզբին՝ 7.3 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ.՝ որպես ռուսական աքսորավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 156, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

4.11 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավո-ության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ, ներառյալ քանդման աշխատանքներից առաջացած	IV	9120060101004	2500 մ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	9մ³
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով	V	31401100 08 99 5	4000մ³

	չաղտոտված հող			
4.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ	IV	35131100 01 00 4	7 մ3
6.	Չտեսակավորված ալյումինի ջարդոն	V	35310101 01 99 5	3 մ3
7.	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը 15%-ից ավելին/	III	31402303 04 03 3	8 մ3
8.	Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ	IV	35121601 01 99 5	0.1տ

Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Միջնակարգ դպրոցիի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

4.12 Աղմուկ և թրթռում:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու շահագործվող շինարարական տեխնիկան: Աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

5.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման աշծատանքներ
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիակայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

5.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

5.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

5.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել

- շինությունների ծածկում անթափանց թաղանփով, համապատսխան բարձրության

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգառրում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

5.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը:

5.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն

դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

5.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը*

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

5.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ*

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող

օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

5.3.6 *Աղմուկ և թրթռում*

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

5.3.7 *Թափոնների կառավարում*

Միջնակարգ դպրոցի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Միջնակարգ դպրոցի կառուցման ընթացքում աառաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

5.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների համապատասխան:

Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը: Ջուրը ջրասույզ պոմպի (Гном 16-16)-ի միջոցով մղվում է ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5.3.9 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Բարձր թերմիկ դիմադրությամբ և արևաթափանցելության փոքր տոկոս ունեցող պատուհաններ
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Օդորակման բարձր արդյունավետության համակարգի կիրառում
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում
- Տաք ջրի պատրաստման համար նախատեսված արևային ճնշումային ջրատաքացուցիչների կիրառում

6. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Միջնակարգ դպրոցիի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 700 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	a) կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել b) շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատսխան բարձրության c) շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, d) պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգառրում: e) շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով. f) իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ g) սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
	Աղմուկ	(a) խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; (b) Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: (c) շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, (d) շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում: (e) պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը (f) շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին: (g) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել (d) Բացառել տարածքում թափոնների բաց այրումը (e) Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելուընթացակարգերը; (f) Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; (g) Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը ավազով կամ մանրախիճով, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի նախատեսվող բիոզուգարաններից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Հետիոտների և երթևեկության ապահովություն Տարածքի բարեկարգում/	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում - կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների; -ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն

կանա չապատում		ապահովելու համար

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Մասնագիտացված ընկերություն	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների	Կապալառու

				ընթացքում	
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողու-թյուն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյու-թերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում Արտաքին զննում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչաթերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 ապրիլի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Տաշիր Տաշիր ք. Դպրոցականների փողոց 8 դպրոց

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ղեկավարի 17.03.2025թ թիվ 250-Ա որոշում, ՀՀ կառավարության 25.08.2001թ թիվ 771 որոշում, քաղաքապետի 10.12.2001թ թիվ 42 որոշում, ՀՀ կառավարության 01.06.2006թ թիվ 1055-Ն որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-008-0238-0002
Մակերեսի չափը (հա)՝ 1.6592
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 18042025-06-0067, գաղտնաբառ՝ QC2YNDDQUQFB

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-008-0038-0002-001	Դպրոց	3492.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	06-008-0038-0002-002	Կաթսայատուն	124.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Անշարժ գույքը ամրացված է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ին:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՊԱՊԻԿՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 18042025-06-0067, գաղտնաբառ՝ QC2VNDDQUQFB

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Էջ 2/2

PM1D-9248-DCDB-D737

ՁԼ N 1-2

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնագրի նախադիտումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ՆԹ-2642-25 21.04.2025թ.

Օբյեկտ **Կառուցում, Նախատեսվում է կառուցել միջնակարգ դպրոց նախատեսված 432 աշակերտի համար:,**

(Օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(Իակիրճ բնորոշումը, հզորությունը)

Նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, ռիսկայնության աստիճանը՝ IV

Նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(Ռիսկայնության աստիճանը (կառնդրիսկ) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Լոռի, համայնք՝ Տաշիր Տաշիր ք. Դպրոցականների փողոց 8 դպրոց, 06-008-0238-0002**

(Մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ / 06969135 /**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 18042025-06-0067**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 21.04.2028թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	Հասարակական կառուցապատման, բնակավայրերի (Հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը	1.6592 (Հողամասի սահմանները՝ կողմնորոշային նշահարված, մանրամասնորեն)
3. Հողամասի առկա վիճակը	Կառուցապատված հողամաս (Ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը) և այլն, նանապատումը, բարեբարոյումն և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	Ներհամայնքային (Ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի միացումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	Գոյություն ունեցող ցանցեր (Նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր	Բնակելի կառուցապատման հողեր

(կից հողօգտագործումների անվանումն և դրանց սահմանները՝ համանուն ներկայացված մինչև)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակույթային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Բացակայում են

(հուշարձանի անվանումը)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Պահպանել հողամասի սահմանագծից հեռավորություն՝ ըստ նորմերի

(տեղանքում գործող արտաոչական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սեռմերտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Պահպանել ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն և ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում» պահանջները:

(ենթակա Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական հրապարակային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճանապարհների ճնապրհման, տակդներ, արտաքին ցանցերի, պաշտպանների հանձնմանությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

17-44

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

11-19

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)

12

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում ՀՀՇՆ II-8.02-2006 «Երկնամերձ շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմամեկուսացման բարելացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

Ըստ նախագծի

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

Ըստ նախագծի

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%))

Ըստ նախագծի

9.7 այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Քանդել 18042025-06-0067 վկայականում նշված թիվ 1 և 2 շինությունները

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Նախատեսել նկուղային հարկ ապաստարանի համար

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի

(հատանձն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2 (*) էլեկտրամատակարարում

Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի

(հատանձն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում	Համաձայն մատակարար կազմակերպության տեխ. պայմանի (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	Բացակայում են (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նախնական տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	
12.6. աղբահանություն	Աղբավայրը գտնվում է Տաշիր Ստեփանավան ավտոճանապարհի 5-րդ կմ հատվածում
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Նախատեսել տարածքի կազմակերպված ջրահեռացում (տեղիճի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Նախագծել տարածքի բարեկարգման և կանաչապատման հատակագիծ (ցանցաֆթային պանսիոնատն վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գոգավոր և այլն)
15. Շինարարական նյութեր	Տեղական նշանակության, քար, ավազ, ցեմենտ, շինփայտ, ցինկապատ թիթեղ (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների ծածկերի, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	Նախատեսել արտակարգ իրավիճակներում մարդկանց պաշտպանության միջոցառումներ և էվակուացիոն ելքեր (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներներ	Նախատեսել հրդեհային ազդարարման սարք հիշեջ ծորակներ ըստ գործող նորմերի (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Պահպանել 16 փետրվարի 2006 թվականի N 392-Ն որոշման պահանջները
19. Շրջակա միջավայրի պահպանում	Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Նախատեսել շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և (անհրաժեշտ ժամանակավոր կահավորում, ժամանակավոր պահեստավորման տարածք և այլն) լուսավորում (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քարաքսին տեսեստության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	մինչև 21.04.2028թ., նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	Պետական համալիր փորձաքննություն, Պարզ փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ իրում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	Ըստ պահանջի (իրավական մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ	Նախատեսել հանրային քննարկում (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և նարգով)
25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում	Համաձայնեցնել մատակարար կազմակերպությունների հետ (նշվում են տվյալ օբյեկտի հատակագծման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու ջնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 58-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահարողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	
	(նշվում են տվյալ օբյեկտի հատակագծման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու ջնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 58-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահարողի) հետ)

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ _____

28. Այլ պայմաններ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

ГЛАВНЫЙ ИНЖЕНЕР
ПЕРВЫЙ ЗАМЕСТИТЕЛЬ
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091
тел.: (374 10) 294-888, 294-753, факс: (374 10) 294-728
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
հեռ.: (374 10) 294-888, 294-753, ֆաքս՝ (374 10) 294-728
էլ.փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«14» 03 2025 թ. № 02/18.1/1644-2025

Հայաստանի տարածքային
զարգացման հիմնադրամի
գործադիր տնօրեն
պարոն Ս. Բաղինյանին

պատճենը՝ **Լոռու ԳԳՄ տնօրեն**
պարոն Վ. Բաղդասարյանին

Ձեր 05.03.2025թ. N Ե/01/649-25
գրության վերաբերյալ

Հարգելի պարոն Բաղինյան

Ձեզ են տրամադրվում Լոռու մարզի Տաշիր համայնքի Տաշիր քաղաքի Դպրոցականների 9-րդ փողոց թիվ 1 հասցեում կառուցվող հիմնական դպրոցի գազիֆիկացման ելակետային տվյալները:

Առդիր՝ ելակետային տվյալները – 2 թերթ:

Հարգանքով՝

Ա. Գաբրիելյան

Հ.Հերգնյան
+374 (10) 294-796

Հաստատում եմ՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Լոռու ԳԳՄ
Տնօրենի տեղակալ-
գլխավոր մասնագետ
Ա. Աբինյան
«__» _____ 2025թ.

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր, Դպրոցականների փողոց 9-րդ, 1-ին շենք հասցեում նախատեսվող թիվ 1 հիմնական դպրոցի գազաֆիկացում

Գործող գազատար	Էլեկտրական տվյալներ
• անվանումը	թ. Տաշիր թիվ 11 ՊԳԿԿ-ն սնող գործող մ/ճ վերգետնյա գազատարից
• միացման կետը (կետերը)	Ըստ ցծապատկերի
• նվազագույն և առավելագույն ճնշումները միացման կետում (կետերում) (Pmin - Pmax) (կգ/սմ²)	1,2-1,6
• գազատարի տրամագիծը (մմ)	57
Գազաֆիկացվող Օբյեկտ	-
• օգտագործման նպատակը	Ոչ կենցաղային
• առավելագույն հզորությունը (գազի առավելագույն ժամային ծախսը) միացման կետում (կետերում) (մ³/ժամ)	110
• հեռավորությունը միացման կետից (մ)	65
• գազի հաշվառման սարք (համապատասխան էլեկտրոնային ճշտիչով)	Ըստ գազասպառման ծախսերի բարձր ճշտության դասի գազահաշվիչ էլ. ճշտիչով
Լրացուցիչ պայմաններ	-
• այլընտրանքային վառելիքի պաշարի նախատեսում	Նախատեսել այլընտրանքային վառելիքի պաշար և օգտագործման հնարավորություն
• գործողության ժամկետը	1 տարի
• Օբյեկտի առանձնահատկությամբ պայմանավորված այլ պայմաններ	Գազսպառման ծավալների համապատասխան տեղադրել գազի ճնշման կարգավորիչ

Էլեկտրական տվյալները սահմանվում են 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշմամբ հաստատված "Հայաստանի հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին" կարգի համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևավորման նպատակով:

Օբյեկտի գազաֆիկացման նպատակով՝ նշտակ գազօգտագործման պահանջի ներկայացման պարագայում (ասպահովելով գազի սարքավորումների և դրանց կիրառման գործարանային պահաջները, ինչպես նաև գազաֆիկացվող շենքերի/նենքերի/ նկատմամբ շին. նորմերի պահանջները) անհրաժեշտ է ԳՍՕԿ-ով սահմանված կարգով դիմել "Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ:

ՇՏ բաժնի պետ _____ Հ. Թադևոսյան

Կազմեց
Տաշիրի ՏՏ պետի տեղակալ _____ Ա. Վարդանյան